«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ /ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ 103 Բ ՇԵՆՔ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/03-3

ք. Ստեփանավան **«19» հուլիսի 2021թ.**

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Արշակյանի, որը գործում է «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման /Մարշալ Բաղրամյան 103 բ /շենք// աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրին կից համաձայնագրի կնքման օրվանից հաշված 75 օրացույցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իրուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնցպահպանումնանհրաժեշտէ աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու ևՊատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի

թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջծավալով Աշխատանքնընդունվելուօրվանհաջորդողօրվանիցհաշված 1095 օր : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը,օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻՀԱՆՁՆՄԱՆԵՎԸՆԴՈՒՆՄԱՆԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻԳԻՆԸԵՎՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24240000 (քսանչորս միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀդրամ, որից 4040000(չորս միլիոն քառասուն հազար)ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն :Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուինփոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսվածգումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսիչափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ)տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ900252101655 ՀՎՀՀ 06954104	«Փայլք» ՍՊԸ ք. Տաշիր, Վան 1 «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 1150020591901961 ՀՎՀՀ 06948686
/ստորագրություն/ Կ.Տ	Տ. Արշակյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«19» հուլիսի 2021 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/03-3
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ/ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ 103 Բ /ՇԵՆՔ// ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ	-	-		
1	46--98	Ալիքավոր ա/ց թերթերից ծածկի ապամոնտաժում	100մ²	11,20	45,45	509,01
2	10-71 գ-0,25	Ջեղնահարկի լուսամուտի ապամոնտաժում	հատ	4	0,91	3,64
3	8-300 գ-0.4	Տանիքի գոյություն ունեցող փայտանյութի ապամոնտաժում	մ³	35,701	4,54	162,25
4	1-968	Գոյություն ունեցող և առաջացած շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	մ³	55,50	0,91	50,45
5	Գ130-4	Շին աղբի տեղափոխում մինչև 4կմ	տն	88,80	1,82	161,43
		Տանիքի կառուցում	-	-	0,00	0,00
1	8-131-Բ	Ջրհորդանի քանդում և նորի տեղադրում գունավոր ց/թիթեղով 0,5մմ	100 գծմ	1,60	227,24	363,58
2	10-198	Ջրհորդանի տախտակների տեղադրում 50մմ հաստ.	մ²	118,50	2,27	269,28
3	Շուկա	Ջրհորդանի փայտանյութի արժեքը	մ³	5,925	145,43	861,68
4	10-70	Տանիքի փայտե հիմնակմախքի տեղադրում օգտագործելով քանդած փայտանյութից	մ³	3,600	136,34	490,83
5	10-70	Տանիքի նոր փայտե հիմնակմախքի տեղադրում	մ³	19,358	136,34	2639,31
6	8-14-Բ	Կավարամածի տեղադրում	մ²	1120,0	0,73	814,42
7	Շուկա	Կավարամածի փայտանյութի արժեքը	մ³	5,85	145,43	850,77
8	10-198	Քիվի տախտակների տեղադրում 20մմ հաստ.	մ²	72,0	0,45	32,72
9	Շուկա	Քիվի փայտանյութի արժեքը	մ³	1,44	145,43	209,42
10	10-198	Պիպի տախտակների տեղադրում 50մմ հաստ.	մ²	27,0	0,45	12,27
11	Շուկա	Պիպի փայտանյութի արժեքը	մ³	1,35	145,43	196,33
12	9-24	Տանիքածածկույթի կառուցում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով ԿՊ-25-0,5մմ	մ²	1120,0	5,27	5904,52
13	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	մ³	30,323	72,72	2204,96
14	10-203	Կավարամածի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	100մ² մշակ. մակ.	11,20	54,54	610,81
15	10-71	Ջեղնահարկի լուսամուտի կառուցում	հատ	6	27,27	163,61
16	8-279	Ջեղնալուսամուտների և օդատարերի կցումներ գումավոր ց/թիթեղով 0,5մմ	100մ²	0,6022	1,82	1,09
17	շուկա	Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	60,56	4,09	247,71
18	8-279	Պիպերի և կարանների կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,36	272,68	98,17
19	շուկա	Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	36,0	4,09	147,25
20	8-279	Քիվերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,72	181,79	130,89
21	շուկա	Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	72,0	4,09	294,50
22	8-279	Փոքր ծածկույթի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,336	181,79	61,08
23	շուկա	Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	33,6	4,09	137,43
24	շուկա	ինքնապտուտակ	հատ	5100	0,02	92,71
25	8-227-Բ	Ջազարների ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120մմ	հատ	13	5,45	70,90
26	8-227-Բ	Ջազարների տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ150մմ	հատ	4	5,45	21,81
27	8-215-Բ	Ջրթափ խողովակների ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ	100մ	2,10	472,65	992,57
28	8-215-Բ	Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ	100մ	0,06	472,65	28,36
29	8-215-Բ	Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ150մմ 0,5մմ	100մ	0,66	499,92	329,95
30	8-219-Բ	Արմունկի ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120 մմ	հատ	13	2,45	31,90

31	8-219-Բ	Արմունկի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ150 մմ	հատ	4	2,45	9,82
32	20-524	գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա գունավոր ց/թիթեղից 0.5մմ	մ²	12,50	13,63	170,43
33	8-282-Բ	Տանիքի պողպատե պաշտ-պանիչ մետաղական ճաղա-շարի մոնտաժում	100 գծմ	1,54	90,89	139,98
34	շուկա	Շերտապողպատ-40x3	մ	200,2	1,09	218,37
35	շուկա	Անրան Φ10A240	տն	0,4	599,90	229,16
36	15-614	Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 անգամ	100մ²	0,78	72,72	56,72
37	7-22	Ձեղնահարկի լուսամուտների շերտափեղկի տեղադրում / 6հատ/	մ²	3,71	4,54	16,84
38	շուկա	Փայտե չորսու	մ³	0,090	145,43	13,09
39	շուկա	Շերտափեղկի տախտակ 110x20մմ	մ³	0,072	145,43	10,47
40	շուկա	Ծխնիներ	հատ	12	1,82	21,81
41	14-172	Փայտե էլեմենտների յուղաներկում	մ²	13,65	1,82	24,81
42	շուկա	Ծակոտկեն ռետին 150մմ	մ	25,0	3,64	90,89
		Ընդամենը				***20200,00***
		ԱԱՀ 20%				***4040,000***
		Ընդամենը				***24240,00***

* Կապալառուն աշխատանքները կատարում է Ստեփանավան համայնքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ո/հ90025210165 5
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փայլք» ՍՊԸ
գ. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«19» հուլիսի 2021 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/03-3
ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

Հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական Ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝ Օգտագործվելիք նյութերի				Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Չ/մ	Քանակ	Գումար /դրամ	
Զրհորդանի քանդում և նորի տեղադրում գունավոր ց/թիթեղով 0,5մմ	100 գծմ	1,60	363,58	5-7 աշխատակից
Զրհորդանի տախտակների տեղադրում 50մմ հաստ.	մ²	118,50	269,28	
Զրհորդանի փայտանյութի արժեքը	մ³	5,925	861,68	
Տանիքի փայտե հիմնակմախքի տեղադրում օգտագործելով քանդած փայտանյութից	մ³	3,600	490,83	
Տանիքի նոր փայտե հիմնակմախքի տեղադրում	մ³	19,358	2639,31	
Կավարամածի տեղադրում	մ²	1120,0	814,42	
Կավարամածի փայտանյութի արժեքը	մ³	5,85	850,77	
Քիվի տախտակների տեղադրում 20մմ հաստ.	մ²	72,0	32,72	
Քիվի փայտանյութի արժեքը	մ³	1,44	209,42	
Պիպի տախտակների տեղադրում 50մմ հաստ.	մ²	27,0	12,27	
Պիպի փայտանյութի արժեքը	մ³	1,35	196,33	
Տանիքածածկույթի կառուցում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով ԿՊ-25-0,5մմ	մ²	1120,0	5904,52	
Տանիքի փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	մ³	30,323	2204,96	
Կավարամածի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	100մ² մշակ. մակ.	11,20	610,81	
Ջեղնահարկի լուսամուտի կառուցում	հատ	6	163,61	
Ջեղնալուսամուտների և օդատարերի կցումներ գումավոր ց/թիթեղով 0,5մմ	100մ²	0,6022	1,09	
Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	60,56	247,71	
Պիպերի և կարանների կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,36	98,17	
Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	36,0	147,25	
Քիվերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,72	130,89	
Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	72,0	294,50	
Փոքր ծածկույթի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ²	0,336	61,08	
Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ²	33,6	137,43	
ինքնապտուտակ	հատ	5100	92,71	
Ջագարների ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120մմ	հատ	13	70,90	
Ջագարների տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ150մմ	հատ	4	21,81	
Զրթափ խողովակների ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ	100մ	2,10	992,57	
Զրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ	100մ	0,06	28,36	
Զրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ150մմ 0,5մմ	100մ	0,66	329,95	
Արմունկի ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120 մմ	հատ	13	31,90	
Արմունկի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ150 մմ	հատ	4	9,82	
գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա գունավոր ց/թիթեղից 0.5մմ	մ²	12,50	170,43	
Տանիքի պողպատե պաշտ-պանիչ մետաղական ճաղա-շարի	100	1,54	139,98	

մոնտաժում	գծմ			
Շերտապողպատ-40x3	մ	200,2	218,37	
Ամրան Φ10A240	տն	0,4	229,16	
Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 անգամ	100մ²	0,78	56,72	
Ձեղնահարկի լուսամուտների շերտափեղկի տեղադրում / 6հատ/	մ²	3,71	16,84	
Փայտե չորսու	մ³	0,090	13,09	
Շերտափեղկի տախտակ 110x20մմ	մ³	0,072	10,47	
Ծխնիներ	հատ	12	21,81	
Փայտե էլեմենտների յուղաներկում	մ²	13,65	24,81	
Ծակոտկեն ռետին 150մմ	մ	25,0	90,89	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ900252101655
ՀԿՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀԿՀՀ 06948686

Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» հուլիսի 2021 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/03-3
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ/ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ 103 Բ /ՇԵՆՔ// ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքներիառանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
3	Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում /Մարշալ Բաղրամյան 103 բ /շենք//	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	75 օրացույցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ900252101655
ՀՎՀՀ 06984104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«19» հուլիսի 2021 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/03-3
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45261124/503	Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում / Մարշալ Բաղրամյան 103 բ /շենք/	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ900252101655
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ